

Հայրապետ Մարգարեան

Անիի՝ որպէս Մերձաւոր Արեւելքի նշանաւոր կենտրոններից մէկի ողջ դերն ու կարեւորութիւնը բացայայտելիս նաեւ հայոց մայրաքաղաքի մշակութային ընդհանուր մթնոլորտը պարզաբանելու անհրաժեշտութիւն է զգացուում: Մասնաւորապէս՝ յատուկ ուշադրութեան են արժանի այն երեւոյթները, որոնք մատնանշում են մշակութային բազմազան շփումների համար նպաստաւոր քաղաքային ինքնատիպ միջավայրի առկայութիւնը Անիում: Օրինաչափօրէն այսպիսի հարցեր են ծագում. ինչպիսի՞ հետեւանքներ կարող էր թողնել էթնիկական ու դաւանական առումներով խայտարեցող բնակչութեան տեւական համակեցութիւնը եւ ամենօրեայ հաղորդակցութիւնը խոշոր քաղաքում, ի՞նչ ընդհանրութիւններ ու նմանութիւններ պէտք է առաջանային քաղաքային բնակչութեան տարբեր շերտերի, էթնիկական ու կրօնական առումով բազմազան խմբերի միջեւ, ո՞ր քաղաքական, տնտեսական ու մշակութային շահերն էին միաւորում ու համախմբում անեցիների մեծ մասին: Կարելի է չկասկածել, որ քաղաքային կեանքի իւրօրինակ պայմաններն իրենց կնիքն էին թողնում անեցիների աշխարհընկալման եւ մտակառուցութեան վրայ ու յարուցում հասարակութեան անդադան հայեացքներն արտայայտող հայ հոգեւորականութեան երբեմն բուռն կերպով գրասեւորուող բողոքն ու դատապարտումը: Պատահական է, որ Անիի հայերէն վիճակագրից մէկը հաւասարապէս ուղղուած է քաղաքային բնակչութեան հիմնական դաւանական խմբերին՝ միաբնակ հայերին, երկաբնակ հայերին, վրացիներին եւ մահադականներին: Այս ար-

ձանագրութեան անէծքի բանաձեւը («որ եւ զմեր աւանդս խափանել ջանայ. թէ հայ լինի կամ վրացի կամ տաճիկ՝ հանէ, դատի եւ դատապարտի յԱստուծոյ մասնակից, եւ զեհեհնակից սատանաի եղիցի. եւ վրացին կրուլ եւ անիծած լիցի եւ տաճիկն յամենայն փառաւորեալ փեղամբարաց ամաւթով եւ սեւերես լինի»¹) խօսուած վկայութիւն է այն մասին, որ հայերէնը թէեւ հասկանալի էր բնակչութեան ճնշող զանգուածի համար, բայց իւրաքանչիւր հատուածին սաստելու համար հարկ էր լինում դիմել նրան հարազատ հասկացութիւններին ու նզովքներին:

Անիական իւրօրինակ միջավայրը լիովին պատկերացնելու համար բաւական է յիշատակել երկու բնութագրական փաստ՝ միմիայն ժԲ. դարի երկրորդ կէսի պատմութիւնից: 1161 թ., երբ վրացական զօրքերը Գէորգի Գ-ի (1155/56-1184 թթ.) հրամանով գրաւեցին Անին, քաղաքի քրիստոնեայ ու մահադական բնակչութիւնը բռնութիւններով ու հալածանքներով թիւր հասնում էր հազարի)²: Ուշագրաւ է, որ մահապատից հրաջքով փրկուել է քաղաքի մահադական հոգեւորականներից Բուրհան ալ-դին Աբու Նասր Մասուդ Անեցին, քանի որ նա զարմացրել է վրացիներին Աւետարանի հիմնաւոր իմացութեամբ: Ընդ որում՝ այս դէպքերի մասին նրա չափածոյ գրառումները շարադրուած են այնպիսի պարսկերէնով, որ հիմք են

1 Դիւան հայ վիճակագրութեան, պրակ I, կազմեց Յ. Օրբելի, Երևան, 1966, էջ 27:
2 Մատթէոս Ուոհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 426:

տուել վ. Մինորսկուն քամահարանքով արտայայտուելու նրա ստեղծագործութեան մասին³: Մահադական հոգեւորականը որչա՞փ սերտ առնչութիւններ պէտք է ունեցած լինէր տեղական քրիստոնեայ բնակչութեան եւ հոգեւորականութեան հետ, որ իւրացրած լինէր ոչ միայն Սուրբ Գիրքը, այլեւ, հաւանաբար, ենթարկուած լինէր Անիի լեզուական միջավայրի (անշուշտ՝ հայերէնի) ազդեցութեանը:

Սակայն քաղաքի ընդհանուր մշակութային միջավայրը նպաստում էր նաեւ բուռն հետաքրքրութեան առաջացմանը արեւելեան՝ արաբական ու պարսկական մատենագրութեան այն յուշարձանների նկատմամբ, որոնք հարուստ աւանդոյթներով էին յատկանշուած: Չմոռանանք նաեւ, որ քաղաքական հանգամանքների թելադրանքով բուռն Հայաստանում աստիճանաբար խզում էին փոխարարեցութիւնները բիւզանդական միջավայրի հետ, եւ այս նոր մշակութային իրադրութիւնը չէր կարող անհետեւանք մնալ: Ուստի եւ Բուրհան ալ-դին Աբու Նասր Մասուդ Անեցու կրտսեր ժամանակակիցը՝ քաղաքի մայր եկեղեցու փակակալ Մխիթար Անեցին 1187 թ. պարսկերէնից թարգմանել է արեւգալի եւ լուսնի խաւարումների պատճառների մասին մի երկ, որն, իր հերթին, աւելի վաղ ժամանակներում յունարէնից է թարգմանուած եղել: Պատահական չի կարելի համարել այն փաստը, որ միեւնոյն հեղինակը իր «Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց» աշխատութեան մէջ կարեւոր տեղ է յատկացնում Մուհամմեդի գործունէութեանը ու մահադականութեան առաջացման, ինչպէս նաեւ արաբական խալիֆների ու սելջուկների պատմութեան հարցերին: Այսպիսով՝ կովկասեան քաղաքներում ձեւաւորուած ինքնայատուկ մշակութային իրադրութիւնը, որի

3 V. Minorsky, Studies in Caucasian History, London, 1953, p. 89.

դասական բնութագրութիւնը հանդիպում է արաբ հեղինակների երկերում («եկեղեցին ու մզկիթը դէմ դիմաց էին գտնուում»⁴), թելադրում էր սերտ փոխարարեցութիւնների մէջ մտնել նոյնիսկ երկու կրօնների սպասուորներին: Բնական է ենթադրել, որ համակողմանի ու տեւական են եղել քաղաքային բնակչութեան այն խաւերի փոխադարձ շփումները, որոնց տնտեսական զբաղմունքները եւ աշխարհայեացքային պատկերացումներն ընդհանրութեան բազում եզրեր են ունեցել:

Ժամանակի հայ հասարակութեան քաղաքաբնակ շերտերի տրամադրութիւնները արտայայտութիւն պէտք է համարել նաեւ հետաքրքրութեան դրսեւորումը աստիճանաբար շարադրուած եւ աշխարհիկ բովանդակութիւն ունեցող երկերի նկատմամբ: Դրանց շարքում, անկասկած, յիշատակութեան է արժանի «Աղէկախօս» առակութեան է արժանի երազահանը, որի նուանումով յայտնի էր հայագէտները գնահատութեան հարցում հայագէտները աւանդաբար զսպուածութիւն են ցուցաբերել, իսկ երբեմն էլ անխնայ քննադատելու հակում են դրսեւորել: «Նոր բառգիրք հայկազեան լեզուի»-ի հեղինակներն այն բնութագրել են որպէս «անհեթեթ եւ իբրեւ ժամանակի գործ թարգմանեալ յոճ ուսմական մարական գործ թարգմանեալ յոճ ուսմական յայլոց ազգաց... ի ժԳ դարու. ուստի հարկեցաք նշանակել զքանի մի բառս»⁵: «Աղէկախօս» երազահանը, այսպիսով, գնահատութեան է արժանացել սոսկ բառապաշարի շնորհիւ: Ղ. Ալիշանը, խիստ քննադատելով հանդերձ երազների հիման վրայ գուշակութեամբ զբաղուելու սովորութիւնը, այնուամենայնիւ, նշել է, որ

4 V. Minorsky, Աշխարհ, էջ 135. Ա. Տեր-Ղեւոնդեան, Արարական ամիսագրութիւնները Բագրատունեաց Հայաստանում, Երևան, 1965, էջ 129-130. Ս. Մ. Մուրադյան, Новое в "Кавказском культурном мире" в XI-XIII веках, "Кавказ и Византия", вып. 4, Ереван, 1984, стр. 142-158.
5 Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հտ. Ա. Վեհեսիկ, 1836, էջ 11:

գտնուող տաճիկ (հնարաւոր է՝ արաբ) «մեծ մարդու» դերի պարզաբանումը: Այդ անձնաւորութիւնը գերի ընկած լինելու կամ էլ մէկ այլ պատճառով ազատութիւնից զրկուած անձնաւորութիւն պէտք է լինէր եւ եթէ իմացել է հայերէն, ապա հաւանաբար՝ սահմանափակ չափով: Բայց արաբերէնի մէջ, ինչպէս երեւում է, քաջահմուտ չեն եղել նաեւ անցի գործիչները: Հետեւաբար՝ նրանք բոլորն էլ, չորսը միասին, մասնակցել են թարգմանութեան իրականացմանը: Յիշատակարանի «եւ այս գիրս ի հետ յայն զըտանին եւ յայս երեք հոգին փոխել են» արտայայտութիւնը թոյլ է տալիս կարծել, որ «ի հետ»-ը վերաբերում է «մեծ», այսինքն՝ տարէց, ծեր «տաճիկին»: Նա է, որ պէտք է հմուտ լինէր երազների մեկնաբանութեան ասպարէզում եւ անցի գործիչներին բացատրէր տեսական գրոյթներն ու անձանօթ հասկացութիւնները: Հնարաւոր է, որ նա է եղել խորհրդատուն թարգմանութեան համար համապատասխան մեկնողական երկ ընտրելու առումով: Չի բացառում նաեւ, որ ծերունի օտարականն է տրամադրել համապատասխան արաբերէն ձեռագիրը: Այսինքն՝ նա կատարել է այն դերը, որ ժ.գ. դարի վերջին վիճակուել է այն հայ գերուն, ով օգնել է մամուլներին հայերէնից արաբերէն թարգմանել մինչեւ այդ արաբերէնից հայերէն թարգմանուած ձեռագրական ձեռնարկը: Ինչպէս նշում է հայերէնից արաբերէն թարգմանութիւնն իրականացնողը, աւելի շուտ թարգմանական աշխատանքների ղեկավարը, «գեղերի ու գեղաբոյսերի անունները եւ եզրերը (տերմինները) [յաճախ] արաբերէն ան-

հասկանալի էին եւ բարձրեալն աստուած նրան (թարգմանութեան ղեկավարին - Հ. Մ.) օգնեց հայ գերիների մէջ մի վիրաբոյժ գտնել, որը անհասկանալի բառերը բանիմացութեամբ բացատրեց, քանզի այդ գիրքը բովանդակում էր այն, ինչ նա ստուգել էր փորձով, իսկութիւնը ճշտել եւ ճշմարտութիւնն իմացել էր»²⁸: Այսպիսի գործուն մասնակցութիւնը թարգմանութեանը հիմնովին տարբերում է այն դերից, որ մեր օրերում կատարում են բառացի թարգմանութիւն իրականացնողները, եւ բարձր գնահատանքի է արժանի:

Որպէս թարգմանութեան վայր, ինչպէս տեսանք, յիշատակում են Մաղասբերդը եւ Ծարքարը, որոնց նոյնացման կամ տարբեր լինելու, իսկ Ծարքարի դէպքում՝ ճշգրիտ տեղորոշման վերաբերեալ քննարկումները շարունակում են²⁹:

Թարգմանութեան յիշատակարանի վերջում նշուած «ՈՂԱ թուին ի հայ լեզուի սահմի ամսոյ Գ աւուրն» առաւել քան կոնկրետ է եւ ենթադրել է տալիս, որ աշխատանքների աւարտման օրն է: Հայոց Մեծ թուականով նշուած տարեթիւը համապատասխանում է 1222 թ. մարտի 28-ին³⁰ եւ եթէ իրօք վերաբերում է աշխատանքների աւարտման օրուան, ապա բուն գործընթացը ծաւալուել է 1221 թ. աշնան - 1222 թ. ձմռան ամիսներին:

28 Բ. Չուգասեան, Ա. Տէր-Ղեւոնդեան, «Բժշկարան ձիոյ» երկի նորայայտ արաբերէն թարգմանութիւնը, - ՀՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1985, թիւ 11, էջ 64:

29 Տե՛ս Կ. Մաթեոսեան, Աշ. աշխ., էջ 216-235. P. Dangles, Mahasberd retrouvée, Mélanges Jean-Pierre Mahé (Travaux et memoires 18), Paris, 2014, p. 205-220:

30 Հ. Բաղալեան, Օրացոյցի պատմութիւն, Երեւան, 1970, էջ 369: Ն. Ակիբեանը (Գրիգորիս Ա կաթողիկոս Աղթամարի, Վիեննա, 1958, էջ ԾԾ) և Վ. Արրահամեանը (Արճեստները Հայաստանում IV-XVIII դդ., Երևան, 1956, էջ 29-30) Աշոտ եմ 1221 թ.:

ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԴԵՐԸ ԻՐԱՆԱՀՊԱՏԱԿ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Քրիստիտե Կոստիկեան

Շահ Աբաս Ա-ի կողմից հայերի բռնի զաղթեցումից յետոյ Սպահանում հիմնուած Նոր Զուղան իր ուրոյն տեղն ունի իրանի ու իրանահպատակ հայութեան պատմութեան մէջ: Նոր Զուղայի հայ վաճառականներն ու առեւտրական կապիտալը կարեւոր դեր էին խաղում իրանի տուեալ ժամանակաշրջանի տնտեսութեան մէջ եւ համաշխարհային առեւտրում: Այս հարցը բազմիցս ուսումնասիրուել է հայ եւ օտար հետազօտողների աշխատութիւններում: Նպատակ չունենալով կրկին անդրադառնալ դրան՝ սոյն յօդուածում կը ցանկանայինք կանգ առնել Նոր Զուղայի հայութեան ու յատկապէս՝ մեծահարուստ վաճառականների գործունէութեան մէկ այլ կողմի՝ այն կարեւոր դերի վրայ, որ նրանք խաղում էին իրանական տիրապետութեան տակ գտնուող Արեւելեան Հաստանի ու ընդհանրապէս իրանահպատակ հայութեան իրաւունքների պաշտպանութեան գործում: Նոր Զուղայի հայ վաճառականներն ունէին բարձր սոցիալական կարգավիճակ: Նրանք համարում էին իրանական հասարակութեան բարձր խաւի ներկայացուցիչներ, եւ նրանցից շատերը կրում էին «խօջա» տիտղոսը, որը տրոււ էր մարդկանց՝ ի նշան նրանց հարստութեան, յատուկ ծառայութիւնների, խելքի թեան, յատուկ ծառայութիւնների, խելքի թեան, յատուկ ծառայութիւնների, Գտնուելով ու արժանիքների՝ համար: Գտնուելով մայր թագուհու յատուկ հովանաւորութեան տակ՝ հայ խօջաներից շատերը թեան ունէին պարսից արքունիք եւ ար-

տօնեալ դիրք էին զբաղեցնում: Նրանցից ոմանք հանդէս էին գալիս տնտեսական գծով շահի խորհրդականի դերում եւ մասնակցում Սեֆեան շահի ու եւրոպական երկրների միջեւ վարուող առեւտրական բանակցութիւններին:

Նոր Զուղայի թեմը ժէ. դարում դառնում է Հայոց Եկեղեցու կարեւոր թեմերից մէկը, իսկ թեմական կենտրոն հանդիսանում է Հայոց Եկեղեցու եւ Սեֆեան վերցնում Հայոց Եկեղեցու եւ Սեֆեան արքունիքի միջեւ կապն ապահովող կամուրջի դերը: Հարուստ վաճառականների մուրջի դերը: Հարուստ վաճառականների ֆինանսական ու բարոյական աջակցութիւնը եւ էջմիածնի կաթողիկոսի ու Նոր Զուղայի առաջնորդների համագործակցութիւնը ապահովում են այդ հայկական թեմի եզակի կարեւորութիւն ունեցող դիրքը: Իր հեղինակութեամբ այն հաւասարում է Պոլսի պատրիարքարանին²: Իրենց արտօնեալ դիրքի շնորհիւ հայ ազգեցիկ վաճառականները կարողանում են միջամտել իրանահպատակ հայութեանը վերամտել իրանահպատակ հայութեանը վերաբերող հարցերին եւ ազդել շահի կայացմանը որոշումների վրայ: Բացի ժամանակաշրջանի միւս ազգայնականներից, այս իրողութեան փաստացի վկաներն են Մատենադարանում, Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի թանգարանում եւ այլուր կիչ վանքի թանգարանում եւ այլուր պահպանուած պարսկերէն վաւերագրերը:

Յայտնի իրողութիւն է, որ իրանական պետութեան տիրապետութեան ներքոյ գտնուող Հայոց Եկեղեցու ու հայութեան իրաւունքների պաշտպանութեան ու կենսական նշանակութիւն ունեցող շատ հար-

1 V. Ghougassian, The Emergence of the Armenian Diocese of New Julfa in the 17th Century, Columbia University, 1995, p. 80.

2 Նոյն տեղում, էջ 134: